Օձու լեզուն էրկու ճղակ՝ ալելուիա²⁴
Մեյնի շարով, մեյնի բարով, ալելուիա,
Չարին էրթայ վեր սարերուն, ալելուիա,
Բարին գնայ վեր էսա տուն, ալելուիա
Կամ՝

էս տանը կա երկու լեզու, ալելուիա,
Մինը բարի, մինը շարի, ալելուիա,
Չարինը ընդի, բարինը բատի, ալելուիա,
Բարին վեր գա ձեզ հեա նսաի, ալելուիա²⁵,

²² Թոնրի պաշտամունքի, այն եկեղեցուն հավասար ըն-
կալելու մասին է վկայում ռթոնրի պսակի սովորութիւնը, որ
համահավասար էր գիտվում եկեղեցական պսակին։

²³ Ե՛մինյան ազգագրական ժողովածու, հ. 2, էջ 26—27։

²⁴ Նույն տեղում, էջ 27—28։

²⁵ «Ազգագրական հանգես», 1903, ր. X, էջ 252։

Կամ՝

էս տանը կա երկու լիղու,
Մինը բարի, մինը շարի,
Չարինը ընդի, բարինը բատի,
Բարին վեր գա ձեզ հետ նստի²⁶։

Կամ՝

էս տանը էրկու օրորոց,
Մինը բարի, մինը շարոց,
Չարինը շարով կործանվի,
Բարին բարով առաջվի
Տունը շեն, տունը շեն,
Ձեր պստիկի անրմն ի՞նչ ա²⁷։

Այս գաղափարները կրկնվում են գրեթե բո-
լոր ամանորյա երգերի մեջ, գառնալով գրանց
պարտագիր հտտկանիչը։ Միսական երգերում
արտահայտված նպատակին հանելու համար էլ
գործի էին գրվում այդ հմայական բանաձևերն
ու երգերը։ Այդ մասնությունը հստակորեն ար-
տահայտված է առհասարակ գարնանային տոնա-
կան խմբի և մասնավորապես նոր տարվան նը-
վիրված երգերի մեջ։

Օձու լեզուն էրկու ճղակ՝ ալելուիա
Մեյնի շարով, մեյնի բարով, ալելուիա
Չարին էրթայ վեր սարերուն,
Բարին գնայ վեր էսա տուն, ալելուիա.
Մամիկ, մամիկ ես քե ծառայ՝
Աօլեր խաղի, թող ճրոուրոսյ.
Չուր մառնի գուռ մեյ գնա, ալելուիա.
Քեղնե շինք ուզի ձին ինան շորին.
Քինե կուգինք էրկու կուրուշ, խարիր փա-
րայ²⁸,

Այդ բնույթի երգերը մեծ մասամբ սկսվում
են տանտերերի և նրանց ասն ու օջախի հասցեին
արված գովասանքով, մի բան, որ ծագումով հաս-
նում է նախնական մագիային և կապվում հատ-
կապես բնասյուշտական բարոնումների հետ։

Ամանորի երգափնջի մեջ ասաներերին ուղղ-
ված, գովարանական բնույթի երգերի խումբը
ամենից առաջ ընդորոշվում է երկնային լուսա-
աունների, հաակապես Արեգակի հաճախակի հիշա-
տակմամբ։ Երգերի այս խմբի բանաստեղծական
պատկերները կազմվել են տանտերին երկնային
լուսաաունների, հաակապես արեի հետ համեմա-
տելով։

²⁶ Նույն տեղում։

²⁷ Նույն տեղում, էջ 253։

²⁸ Ե՛մինյան ազգագրական ժողովածու, հ. Ժ, էջ 27—
28։

Կըտեր հողը խնգան փոշի,
Ծոծը վրեն ծալած ոսկի,
Դուռը վրեն փերթ ըրեքնակ,
Կըտեր վրէն ըռուր լիսնիակ,
Տան սները կերտններ,
Ոսկե կամար գերաններ
Բարի ըրգուն ալելուա,
Ա շեն, հա շեն, էս տունը շեն,
Աին ու գերան սողոմքաշեն:
Տուն ավուղները ջուխա աղունակ,
Ձեռնավելը փունջ մանուշակ²⁹:

Կամ՝

...Ձեր տունը շեն հետ արեուն,
Արեն էրկըններ ձեր արղէյներուն,
Չարր գատանէր, ըրարին մօտէներ³⁰:

Տանտերերին Արեգակի հետ համեմատելը գովասանքի ամենարարձրագույն ձևն է, ըրեկեցության ապահովագրման հմայական արտահայտությունը, մի ըան, որ Նոր տարվա տոնի շուրջը փնջված ծեսերի հիմնական նպատակն էր: Տանաերերի հասցեին արված ծիսական այգ գովարանությամբ երգերը կապվում են Նոր արվա առնի հիմնական գաղափարախոսությունը:

Մյուս կողմից, երկնային լուսատուների հիշատակումը, մասնավորապես աստերերին Արեգակի հետ համեմատելը, այգ երգերը կապում է Արեգակի պաշտամունքի հետ, որը, ինչպես հայտնի է, քրիստոնեությունը ներառավ Քրիստոսի Ծննդին և Մկրտությունը նվիրված առնական ծիսափնջի մեջ: Այգ կապը Ամտնորի երգերի մեջ արտահայտվում է Քրիստոսի Ծննդի և Մկրտության մոտիվների առկայությամբ, որոնք գրեթե միշտ ունեն նկարագրական ընույթ: Հասկապես երեխաներին նվիրված երգերի մեջ Քրիստոսի ծննդի և Մարիամ ասավածածնի եանամուտ պատկերները պարաագիր էին:

Այգ երգերում երբեմն արվում էր մասնակիացում, անձնավորում, ոչ միայն երգի բնագրի, այլև ծեսի մեջ: Երգողները հարցնում էին ասան փոքրի անունը, ապա երգը՝ առատություն և երջանկություն խոստացող հմայական պատկերներով կապում նրա անվան հետ: Ընդ որում, նկատելի է, որ երեխաներին նվիրված երգերի մեջ Քրիստոսի ծննդի և Մարիամ ասավածածնի եանամուտ պատկերներն անպայման առկա էին: Այգ հանգամանքը լիովին հասկանալի է դառնում, եթե հի-

շենք, որ, ըստ քրիստոնեական ավանդույթների, Քրիստոսի ծննդյան «Ավետիս» շրջողները պետք է գեո պատանի չգարձած տղաներ լինեին՝ ի հիշատակ Իրոգի սպանած երեխաների:

Ճիշտ է, խոսքը վերարերում էր տան փոքրին, մի ըան, որ երգի մեջ հատուկ շեշտվում էր. բայց հաճախ աստերերը տալիս էին նրա անունը, ում կամենում էին և, իհարկե, ամենից առաջ կամ ասան նահապետին (համաձայն նահապետական մեծ ընտանիքում տիրող հոգերանություն, նա ներկայացնում էր ամբողջ ընտանիքը), կամ գեո շամուսնացած, «մուրաղ» ունեցող երիտասարդին, որի ամուսնությունն ու պտղավորվելը նույնպես սիմվոլացրած էր համապատասխան հարսանեկան ծիսակատարության մեջ: Նոր արվա այս ընույթի երգերն առնչվում էին հարսանեկան հմայական ըմբռնումներին և Լրգի մեջ արտահայտվում կենաց ծառայակերի միջով³¹:

—Ձեր աղի անուն ի՞նչ ի, ալելուիա
Յէկոր քե ծառէ, ալելուիա

—Անղան յառջե խտղար ըրարին, ալելուիա
Կթխեն ի ձեռն նոան գինին, ալելուիա
Յէկոր նսաէ ծառի արկին, ալելուիա
Մաղեր թսւլե ծառի ձողին, ալելուիա
Յէկոր խեծեր կապուա քուուակ, ալելուիա
Մեջքն ա դառկեր պողպատ-ուրագ, ալելուիա³²:

Հատուկ հանգիսավորությամբ անունը հարցնելը կապվում է Ամանորյա գուշակության սովորույթի հետ: Այս ենթացությունն անելու հիմք աալիս է հեանյալ Ավետիսը, ուր ըառացիորեն ասվում է.

(Անունը) ըախտը հանենք,

Աջուձեոր ջերը աանենք,

Դուշմանի աչքը հանի,

Տասը շահին շարր աանի³³:

Այս ամենը պուշակության ծեսի մնացորդ լինելու մասին է վկայում նաև անունը հարցնելուց առաջ «Ձինի, լինի» արաահայտությունը, որ կրկնվում է նաև մի այլ արարերակում, ուր ավանդական հարցին ծիսակատար պատանիները պատասխանում են.

³¹ Հիշենք հարսանեկան ծիսակատարության համար այնքան ընդող կենաց ծառի հետ առնչվող ծիսական փունջը:

³² «Էմիլյան աղագրական ժողովածու», հ. 2, էջ 25:

³³ Քաղերուներ, Հայկական սովորություններ, «Աղագրական հանգես», 1901, գ. VII—VIII, էջ 115:

²⁹ «Աղագրական հանգես», 1903, հ. X, էջ 252:

³⁰ Գ. Երև. Եգ. Վանա սառ, երկրորդ մաս, Թիֆլիս, 1899, էջ 14:

(Անունը) նստի բախտը.

Ձևոր տանի ջերը,

Մի բուռն ոսկի հանի,

Չարը տանի, բարին բերի³⁴.

Կենաց ծառի (կյանք, դոյություն) պաշտամունքի հետ կապված ընթացակարգի աշխարհայացքի հմայակուն արտահայտությունները այս երգերի բուն հատկանիշն են:

Արմենակ նստի ծառի տակին, ալելուի
Սամեր թալի ծառի ճեղքին, ալելուի
Առջե զրի նոսն գինին, ալելուի³⁵,
Մի այլ երգում կրկնվում է նույն պատկերը:

Ձեր տղի տնունն ինչի՞ վոհան, ալելուիա
—Վոհան ճու՞ժ՝ ճթադա, ալելուիա
Քևանց բարդի ծառ էրկնցա, ալելուիա
Ճեղքի իթալ բեաղբ բեաղբ, ալելուիա:
Յրմեն ճեղքին ջուխամ ճրագ, ալելուիտ
Վերեն ի ծառի սինամահաւաք, ալելուիա³⁶.

Առհասարակ այդ սիմվոլիկ կենաց ծառի պատկերը կրկնվում է գրեթե բոլոր երգերի մեջ: Վերը բնական պատկերները կապվում են դոհարերության պարզապես հետ, որի հասարակությանը պատկանում ենք հետեւյալ կավետիսում.

Թոյ ձեր սեպանն բոլորի, ավետիս
Կթիանն ի մեջ գինով ի լի, ավետիս
Ձևը բարեկամքն ուրախանան, ավետիս
Չարկամքն ի դուռս սլաատին, ավետիս³⁷:

Ծառի, բույսի վեղետատիվ պաշտամունքը Հայաստանում շատ հին արմատներ ունի և օրինակաբար այն ներթափանցել է Ավետիսների մեջ ու միացել Երուսաղեմ քաղաքի շինարարության աեսարանին:

էրանեկ են տարին, ալելուիա
Ինչ Երուսաղեմ քաղաք ջինեցին, ալելուիա:
Շինեցին թրմմեցին, ալելուիա
Գնացին խասան ծառ խնկա, ալելուիա
Պալթեն զանեն, ծառ կը ճղեր, ալելուիա
Սղոց բեազեն, արուն կվաղեր, ալելուիա³⁸:

Օգտվելով առիթից, առաջարկում ենք նաև Ամանորի ծիսակարգին հարած ծառի (վեղետացիոն) պաշտամունքի վերուպրոկների քննությունը:

³⁴ Նույն տեղում:

³⁵ «էմինյան ազգագրական ժողովածու», հ. 2, էջ 28—29:

³⁶ Նույն տեղում, հ. 6, էջ 27—28:

³⁷ Նույն տեղում:

³⁸ «էմինյան ազգագրական ժողովածու», հ. 2, էջ 28—29:

նր, որ մնացել էին կենցաղում և հասել մինչև XIX դար:

Ավետիսներում այդ պաշտամունքային վերաբերմունքը առկա է, կապված արմավենու, բուրդու, խնկան, ծիրանի ծառերի հետ: Իսկ ծաղիկներից անընդմեջ հիշատակվում են վարդն ու մանուշակը՝ հին հայերի սրբազան ծաղիկները³⁹:

Բերենք մեկ-երկու բնորոշ օրինակներ:

(Անունը) ճու՞ժ էր ճթադա, ալելուիա
Քտնց բարդի ծառ էրկնցա, ալելուիա⁴⁰,
(Անունը) նստի ծառի ճեղքին, ալելուիա
Բոչեամ թալի վարդի փշին, ալելուիա⁴¹:

Մի այլ երգում, տանտիրուհու հասցեին արված դոկասանքների շարքում, ասվում է.

...Հտցթուխն փունջ մնեշակ, ալելուիա⁴²:

Ինչպես նոր տարվա տոնակաատություն ծիսակարգում, այնպես էլ նրան ուղեկցող ծիսական երգերում ջրի և ծառի պաշտամունքը միտհյուսված է հանդես գալիս: Ըստ էության ծառի պաշտամունքի հետ մոտիկից առնչվում են նոր տարվա երգերի մեջ եղած նույն դադափարի արտահայտությունները:

Գատեմ գյուղում (Արեմտյան Հայաստան) այդ նույն մտայնությունը արտահայտվում էր հետեւյալ ծեսի միջոցով: Ինչ երիասարդներ, որոնք ամռանը դող էին ունեցել, տարեմտի դիշերն ապարանջանի նման ձեռքերն անցկացնելով նախապես թխված սե կնդիկով՝ շուշմտյով դարդարված «րեկեղը», դնում էին աղբյուրի տեղում, աղթում, ապա՝ մերկանալով, մտնում էին գուռը, հավասարացած, որ այդ վայրկյանին աղբյուրից ոսկի դարձած հոսող ջուրն իրեն կաղատի դողից: Ձեռքերին հաղցրած բեկեղները աղբյուրի ջրի մեջ մի լավ թրջելուց հետո, վերադառնում էին տուն և տանեցիներին արթնացնելով, բաժանում էին բոլորին և սա նոր տարվա առաջին համասն էր⁴³:

³⁹ Գր. Ղափանցյան, Արա Գեղեցիկի պաշտամունքը, Մ. Խոսեմացի, Սոսիների պաշտամունքի մասին հիշատակությունը: Վերջապես, մինչև մեր օրերը հասած սրբազան ծառերի պաշտամունքը գրեթե բոլոր ուխտավայրերում: Տե՛ս Ա. Ա. Օղաբաշյան, ԱՔԱ, տետր № 6, 8, 9, 10, 13, 15, 16, 17 և այլն:

⁴⁰ Գրաբարազյանի (Վայոց-ձոր) խաչիկ գյուղից: Քաղբերունի, Հայկական սովորություններ, «Ազգագրական հանդես», 1901, գ. VII—VIII, էջ 115:

⁴¹ «էմինյան ազգագրական ժողովածու», հ. Բ, էջ 27:

⁴² «Արարատ», 1895, № 11, էջ 470:

⁴³ Ե. Պողոսյան, Նոր տարույ տոներ..., էջ 74—75:

Ոսանք ոսկի ջրով լվացվելը բավարար չհամարելով, բարձրանում էին աղբյուրի մոտի թթենու վրա և այնտեղից կանչում վարը մնացածներին. «Թուֆ թոթվեմ կուտե՞ք»: Ներքեից պատասխանում էին. «Այս դամփարին թուֆ կըլլի»: Մտոի վրտ նստածը պատասխանում էր. «Ինչո՞ւ դող կըլլի ու թուֆ չըլլիր»: Ասա իր հագուստից մի ծվեն էր կտրում, կասում ծառի ճյուղին և ցած իջնում:

Ինչպես հաղորդում է Վ. Վ. Տեր-Մինասյանը, ջրի պաշտամունքի հետ կապված տարատեսակները Քղիում XIX դ. այս տեսքն ունեին.

«Ի Քղի կիներ ասիով աղբյուրին մեջ դարի լինելով կանն. «Առ, գարի, տուր բարի»: Երկաթի կտոր մը ձգեն ըսելով, «Առ երկաթ, տուր տովյաթ»: Իսկ էրիկ մարթեր աղբյուրի ջրովը խոտ կ'ըթրջեն և անասունները կկաղընդեն, որ առողջ մնան: Ով որ ջերմոտ է, այս դիշեր կլողնա աղբյուրին մեջ և հետո գրեթե մերկ կնստի հին թթենի վրա: Վարեն ձայն մը առ ջերմոտն. «Հոն-ինչ կնես»: «Թուֆ կուտեմ»: «Հիմա ու թո՞ւֆ. Իմա ու դող» Մտոի ասկ եղողն իսկույն ասպարով կզարեն ծառի բունին: Վերինն իրբ սարսուփահար՝ կը հարցնե, թե ինչու կը դարնի. վարինը կըսե. «Հըմ կզարենեմ, հըմ ձեռքես որ դա, հողիս կտոնեմ»: Այ իսկույն իսպառ իրր թե ջերմը կը փախչի»⁴⁴,

Մտոը թափահարելու, խիելու և մանավանդ սուտնսուրու հանդամները հասկանալի է դառնում, եթե այն դիտում ենք որպես ծառի ողու հեա պտույցի բունվելու ցանկություն, այն մտայնության սրտահայտությունը, թե պտղավորելուն, աճելուն խանդաղող շար ողինները տեղավորված են ծառի վերին ճյուղերում: Թափահարում են, որ այն ընկնի և չխանդարի: Միաժամանակ ծառը թափահարելով կամ խփելով, ցանկանում էին նրան արթնացնել, զգուշացնել, որ շարքը նրտն չվնասի:

Նոր տարվա տունակատարությունն ուղեկցող ծիսական համակարգի մեջ որոշակի տեղ են դրավում ծառի պաշտամունքին միացած կրակի պաշտամունքի հետ կապված ծեսերը: Դրտնցից ամենահետաքրքիր հանդիպում է Լոտիում: Այստեղ, տարեմտի դիշերը (դեկտեմբերի 31-ին) մի մեծ դերան էին բերում ղլխատուն, մի ծայրը ղնում օջախը, իսկ մյուսը շաա անդամ մնում էր դոնից դուրս: Այդ դերանը կոչում էին «տարեմտի քսթուկ», որն այդ երեկոյից մինչև ծննդյան երե-

⁴⁴ Վ. Վ. Տեր-Մինասյան, Անգիր գաղություն և հին սովորություններ, հ. Բ, Կ. Պոլիս, 1904, էջ 11—12:

կոն պեսք է անրնդհատ վառվեր: Մննդյուն երեկոյին այդ գերտնի մնացած խանձողները տանում-հանդերում թաղում էին. որպեսզի թե՛ բերքը առատ լիներ և թե՛ կարկուտն արտին չխվեր: Այդ խանձողից պահում էին, որպեսզի կարկուտ եղած միջոցին դուրս ձգեին և երկինքը խաղաղվեր: Աշխատում էին այդ գիշեր օջախը անշեջ պահել՝ մեծ քտնակությունը փոյտ էին Լոտրում, դարսում դոան մոտի անկյունում և ամեն ներս մանող պարտավոր էր մի կտոր փայտ, դոնե մի տաշեղ ձգել կրակը: Այս մտայնության հետ առնչվում են նաև Նոր տարվա տոնակատարությանն ուղեկցող ծառի պաշտամունքի հետ կապված ծեսերը:

Կեսարացիներն, օրինակ, հավատում էին, որ կադանդի (Նոր տարվա) դիշերը կաղամախները իրար ողջունում են: Համշենցի հայերը ծաղկամտի (Նոր տարվա) երեկոյան մի սեղան էին սարքում, վրան իբրիդով (թաս) ջուր դնում, երկու հատ էլ օնի ցախ և թողնում մինչև առավոտ: Նոր տարվա առավոտյան երկու երիտասարդ տղա տխոս դնում էին բերք չտվող խնձորենու, ասնձենու կամ որևէ այլ մրգի ծառի մոտ: Երիտասարդներից մեկը ձեացնելով, որ կացնեով խփում է ծառին, սուսում էր. «Մեյվտ բերել»⁴⁵ շես, կտրեմ պիտի»: Մյուսը վրա էր բերում. «Կտրել մի, բերի կու»: Այս տեսարանը կրկնում էին երեք տեղամ և համոզված էին, որ ծառն այդ տարի պտուղ կտա»⁴⁶,

Համշենցիները հավատում էին, որ Նոր տարվա դիշերը ծառերը ծուխը են անում, կրկնապտություն տալիս արարչին⁴⁷,

Այսպիսով, քրիստոնեական Ամանուրին (հունվարի 1) ուղեկցող ծիսական սովորույթների համակարգի բնարկումը պտրղ է դարձնում մի բտն՝ այդ ծեսերը հիմնականում շեն կառվում քրիստոնեական պաշտոնական, կանոնիկ գաղափարախոսության հետ ոչ րատ էության, ոչ էլ, նույնիսկ, ծիսականությանը: Ասկայն, ինչպես միաբերան վկայում են աղդարական նյութերը, ժպտվույթի կենցաղային առօրյան կայմող տյգ ծիսական սովորույթներն ընկալվում էին իրրև Նոր տարվա տոնակատարությանը պարտադիր կերպով ուղեկցող ծեսերը: Այս ակնհայտ հակասությունը հասկանալի է դառնում միայն մի դեպքում, եթե նկատի ենք ունենում, որ դրանք ժամանակին

⁴⁵ Մեյվա պարակերեն՝ միրգ, որ մակ է հայերենի որոշ արրառաների մեջ:

⁴⁶ «Ազգագրական հանգես», 1900, հ. 2, էջ 157:

⁴⁷ Նույն տեղում, էջ 154:

խկապես նվիրված են նշել նոր տարվա առնա-
կատարությունը և ուղեկցել են զրան, իսկ հետա-
դայում, բրիտանական կամանդոյի հաստատման
հետ պահվել են սինդ այդ առկա նոր տարվա
առնախառնությունից և միացել նորամուտ բրիտ-
անական տարեմուտի տոնին:

Ինտոլաշտական բմբոնումների համաձայն,
չարք հետադեմում ամենադարձնական միջոցը
զոհարերությունն է: Եվ ահա ծննդյան երգերի
մեջ ներթափանցել է նաև նախաբրիտանական
այդ պատկերները, որի հետևանքով երգերի բո-
վանդակության մեջ առաջացել են այդ իմաստն
արտահայտող սուրբը:

Այն արտահայտվում էր սարբեր եզանակ-
ներում, տմենից առաջ տանտերերից նվիրատվու-
թյուն (զոհարերություն) պահանջելու ձևով: «Ավե-
տիս» շրջելու ձևի էությունը ազերովում էր
կամանդոյի ծիսափնջի կարևոր կողմերից մեկի՝
ծիսական տանտերերի հետ (զաթա, հավ, բն-
կույր, շտաղրած միջոց): Լույնպիսի մնացուկ էր
նույն զուշակության համայնության զոհարումը, որ
արտահայտվում էր նվիրատվության (զոհարերու-
թյան) հիմնական ստարական՝ պաթան, զահան-
ջելուի Խոկ երգերում անընդհատ հիշատակվող
ուրդ պաթան բոտ իմաստի կապվում էր «Տարի»
կոչվող պաթոյին, սրբ հենց կամանդոյի ծիսափնջի
մեջ տարվա զուշակության ձևի հիմնական մի-
ջոցն էր⁴⁸:

Կամանդոյի ծիսակարգի կրկաշարի մեջ զոհա-
րերական համայնության սխմվորիկ արտահայտու-
թյունն առկա է նաև նվիրատվությունից հրաժար-
վող տանտերերին ուղղված ծաղրի և սպառնալիքի
արտահայտությունների մեջ:

Կապանդուր՝ զոս

Ըլեք սվեք երկու կոկու:

Վուվ էր շավեց՝

Իրանց հավուն ճիվը կը կոարեմ:

Էկեր (Լթե) հավ շունին՝

Ճժուն ճիվը կը կոարեմ:

Կաղանդուր՝ զոս⁴⁹:

Նման սպառնալիքներն իրենց ծագումով
կապվում են վնասարեր նմանողական համայնու-
թյան հետ: Ընտ այդում, ենթադրվում էր խոսքի
համայնական ներդրությունները առաջացնել իրական

⁴⁸ Ա. Ա. Օղարաշյան, Քրիստոնեական Ամանդոյի հետ
կապված որոշ ծիսական վերապրումներ, «Տեղեկագիր» (Հաս-
դիտ.), 1965, № 3, Վ. Բղդյան, Երկրագործական մշակույթը
Հայաստանում, Երևան, 1972, էջ 438:

⁴⁹ Ա. Տեր-Պաղոսյան, Նոր տարույ առեր հին և նոր հայոց
բով. Վիեննա, 1952, էջ 64:

վնաս այն տնտեսության մեջ, որը հրաժարվել
է մասնակցել համայնական զոհարերական ծիսա-
կատարություններին: Մեսի և նրան ուղեկցող
երգերի մեջ այդ մտայնությունն արտահայտվում
էր ամբողջ համայնքի բարեկեցությունն ապահո-
վելու խնդրում նրան վերադրվող նշանակությունը:
Եվ Լթե հիշենք, որ տարբեր տնտեսություններից
հավաքած զոհարերությունը (նվիրատվությունը),
համարվում էր ձևապես մասնակցած բոլորի համա-
հավասար սեփականությունը, սպա զարդ կղառ-
նա, որ այդ ճանապարհով բոլորն իրենց մասնակ-
ցությունն էին բերում ամբողջ համայնքի ապա-
հովությունը, հետևաբար նվիրատվությունից (զո-
հարերությունից), որ միևնույն էր, թե զուշակու-
թյունից, հրաժարվողը վաճառի սակ էր դնում
ոչ միայն սովյալ տնտեսության, այլ ամբողջ հա-
մայնքի նոր տնտեսական տարուց ակնկալվող
բարդավանումը: Այդպիսի վերաբերմունքն, ան-
շուշտ, կարող էր առաջանալ այն պայմաններում,
կր համայնքի յուրաքանչյուր սնդամ պատաս-
խանառու էր ամբողջ համայնքի բարեկեցության
համար և, ընդհանրապես, ամբողջ համայնքը
նույնքան պատասխանատու էր յուրաքանչյուր
անդամի բարեկեցության համար:

Կամանդոյի երգերի առանձնահատկություն-
ներից մեկն է՝ նրա հասարակական-տնտեսական
կյանքի դիֆերենցիալ վիճակի անկասկածելիորեն
առկա արտահայտությունն էր: Կային կրկեր՝
նվիրված երկրագործին, անտնտեսական, առե-
տրականին, քաղաքի բնակչին, արհեստավորին:
Մարդու անհատական կյանքն իր բարդ կողմերով
նույնպես զոհարվում է այդ երգերի մեջ: Կան
ամբողջական երգեր, ինչպես նաև մոտիվներ՝
նվիրված պանդուխտին, ամուսնացող երիտա-
սարգներին, ճանապարհորդին, երեխա սպասող
մորը, զծրախո ճակատագրի ունեցողին և այլն:
Ըստ այդմ էլ, երգի բովանդակության մեջ կա-
տարվում էր համապատասխան փոփոխություն,
որոշակի ցույց էր տրվում, թե այն սոցիալական
ինչ խավի կամ ում է նվիրված: Բոլոր դեպքերում
երգերն ունենին հիպերոլիկ, կրոնա-համայնական,
նույնիսկ ասավածարանական ու վարքադրական
(Քրիստոսին ու Մարիամին նվիրված երգերում)
ուժեղ շեշտ:

Սակայն հենց այն, որ այդ երգերի մեջ
այդպես հանդամանորեն հիշատակվում է ավյալ
սոցիալական խումբը կամ վիճակը, ում նվիրվում
է երգը, դրանք կապում է նոր տարվա առնի
այն յուրահասարակ ծիսական-համայնական առանձ-
նահատկությունը, որի համաձայն օրհնվում և

բարեկեցութեան համայնական ակտն էր կատարվում ոչ միայն հասարակութեան յուրաքանչյուր անդամի, այլև տնտեսութեան մեջ որևէ գեր կամ նշանակութիւն ունեցող իրի, առարկայի, անասունի նկատմամբ, ինչպես նաև սարգու անհատական երջտնկութեան և գծրախտութեան, ապագայի և ճակատագրի հարցերն էին վճռվում նույն կրոնա-համայնական գաղափարախոսութեան պահանջների համաձայն:

Այս բոլորը հիմք է տալիս մասծելու, որ ժողովրդական «Ավետիս-ալիւուաները» որպես նոր տարվա ծիսական երգ գոյութիւն են ունեցել սնհիշելի ժամանակներից, իսկ հետագայում, քրիստոնեական պաշտոնական կրոն դառնալուց հետո գրան հարել են Քրիստոսի ծնունդն օրհներգող մոտիվները և այն երգվել է նաև Քրիստոսի ծննդյան առնին⁵⁰:

Այդ տեսակետից ընորոշ է հետևյալ երգը:

...Այս նորածին տերն ե Արքայն, Ավետիս,
Օրհնե ղձեղ գամենեսեան, Ավետիս
Աիրելեօք բարեկամոք, Ավետիս
Եւ զընտանիս ձեր միարան, Ավետիս
Ձեր հեռաւորն գայ շուտով, Ավետիս
Եւ ձեր ոչխարն սուրտով, Ավետիս
Կարասն ձեր լուցվի գինով, Ավետիս
Եւ տունս ձեր հաղար բարով, Ավետիս:

Շարունակութեան մեջ կարգում ենք.

...Ձեզ ողորմի և ձեր նախնեացն, Ավետիս
Եւ ամենայն ուղղափառացն, Ավետիս
Տայ ձեր րարեացն լիութիւն, Ավետիս
Եւ ձեր որդուցն առողջութիւն, Ավետիս
Ննչեցելոց ձեր ողորմի, Ավետիս
Եւ պարգեէ արքայութիւն, Ավետիս⁵¹:

Հետևանշական է տալի հեղինակի ընգմիջարկումը. «Ով եղրտյր և քաղցրածայն եղանակող բանիս, ամեն տարի րարով հասնիս. այն տունն որ իրք մի չիաան և պարսպ հանեն, նա ապա դստս ասա.

...Հարսնուկ պառաւուա մըտիկ մընէր, ավետիս
Խելքն է կտրել, միտքն է ցրվէր, ավետիս:

⁵⁰ Չմոռանաք, որ XVIII դ. Միմոն Երեանցու Տոմարում ասորի սկսված էր համարվում հունվարի 6-ին, ծննդյան տոնի օրը: Հ. Ս. Բաղալյան, օրացույցի պատմություն, Երևան, 1970, էջ 116:

⁵¹ Ե. Կոստանյան, նոր ժողովածու, էջ 12-15:

Ջաստուած յիշէ, արի իր վեր. ավետիս
Չմեր նասիպն մի կտրէր, ավետիս⁵²:

Դուրս է գալիս, որ հեղինակն ինքր տաղն ավելի շուտ ընկալել է որպես նոր տարվան նրվիրված օրհներգ («ամեն տարի բարով հասնիս») և միայն ի պաշտոնե ձգտում էր այն կապել քրիստոնեական գաղափարախոսութեան և մանավանդ Քրիստոսի ծննդի հետ⁵³:

Քննարկվող Ավետիսները պահանջված և հրատարակված են XIX դարում, պատմական Հայաստանի դրեթե բոլոր աղագրական շրջաններից: Սակայն գրանով չի սահմանափակվում զրանդ գոյութեան ժամանակագրական սահմանը: Սրա լավագույն ապացույցն են միջնագարյան ձեռագրերում հայտնաբերված րագմաթիվ Ավետիսները⁵⁴, Այդ նշանակում է. որ գրանք վաղուց արգեն այն տեսքով, ինչպես մեղ են հասել, գոյութեան են ունեցել և կատարել իրենց գերը ժողովրդի ծիսա-համայնական ըմբռնումների ընդհանուր համայնարգում:

Վերջին հիսնամյակում զրանց հետ կատարված փոփոխութիւնները ստանում են ոչ միայն կենցաղում խաղացած գրանց ղեբի մթագնում, այլև մոռացում, մի բան, որ գրեթե ավարտված պրոցես է:

⁵² Նույն տեղում:

⁵³ Այդ մասնութեան արտահայտութիւնը շատ պարզ է դրսևորված XV դ. մի ձեռագրում պահպանված նոր տարվա աթիվ տրվող մաղթանքների մեջ «...ամենայն սրովք բարեխաւս և միջնորդ կայցութ առ նորագործ Ս. Երրորդուհին. զարս զայս շնորաւոր առնել խողազական կենսութիւնուրջ Հայաստանեայց եկեղեցականց, թագաւորաց և տգաաց, իշխանաց և ոամկաց, աէրանց և ծառայից, մեծաանց և աղքատանց: Նորարարն Աստուած նոր արասցէ զսոսա զամենեսեան, նոր և շահկան և աճեցտն տարի և ժամանակ: Նոր արեղակն և լուսին և աստղք: Նոր ծագել թաղտոր, նոր ողորմութեամբ երևեալ կացցէ ի միտ մերում նոր արասցէ հողեղէն մարմնով, պատկառելի զլիսա և կատարելով անդամովք... եկեղեցիք Հայաստանեայց պայծառութիւն, մանկունք նոր սիրովի՝ ուրախացեալ հողով զուարճութիւն, հաւասացեալ ժողովուրդքս ի Տեր րերկրեսցին, որ յանարինաց նեղեալ ազատին արամեալ անձինք մխիթարեսցին. հիւանդացեալքն՝ ողջացին ցրունեալքն ի տարաշխարհ՝ ժողովիւն: Եւ ամենայն աղղ և սզինք, որք ի Քրիստոս հաւատացիեալք օրհնութեամբ, զոհութեամբ, անզաղար սաղմոսերութեամբ փառաւորեն զնոր նորողոզն ամենցուն զՀայր և զՈրդին և զԱ. Հոգին...» (աճ'ս և. Պոլսոյաւ, նոր տարոյ տօնը հին և նոր հայոց քով, Վիեննա, 1952, էջ 23): Այս օրհնարանութիւնը առկա է նաև Վանականի ռեզազս տարեմտաին» ճառի մեջ շատ քիչ արրերութեամբ (Մատ., զիական նյութերի ժողովածու, № 1, էջ 167):

⁵⁴ Աս. Մեաղալյանյան, Հայկական միջնագարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 119, 137, 197, 201, 295, 305, 327, 329, 331, 333:

Մեր շրջադասությունների ընթացքում (վերջին 15 տարվա) Սովետական Հայաստանի ընտարածքում հաջողվեց գրանցել միայն այդ երդերի հատ ու կտոր հաավածներ, որոնք մոռացվելուց բացի, արվեստի և ռովանդակության տեսակետից ենթարկվել են նաև այլակերպման:

Ամենալավ վիճակում են Ստեփանավանի շրջանի Կուրթան գյուղում գրանցված հետևյալ Ավետիսները, որ երգվում էին Բարեկենդանին:

Ա մեր, ա մեր, ալելուա
Աստուծամեր, ալելուա
Հրես եկավ մի ձիավոր
Լախաին ձեռին ըոզ ձիավոր
Տրրշան, տրրշան
Ձեր նոր մանուկի անրմը ի՞նչ ա
Սարգիս, Գրիգոր և այլն:
Սարգիսը հորով մորով մեծտնա
Բախտավոր ըլի:
Հալիլիվա, հալիլիվա
Բարիդուն ձեզ, հալիլիվա
Հաց հունցեցեք, ուրախացեք, հալիլիվա
Թե քնած եք վեր գարթնեցեք, հալիլիվա

կամ՝

Թե դարթուն եք լավ լսեցեք, հալիլիվա
Տունը շեն, տունը շեն, հալիլիվա
Հրես եկավ ըոզ ձիավոր, հալիլիվա
Լախաին ձեռին քաջ ձիավոր, հալիլիվա
Տունը շեն, տունը շեն, հալիլիվա
Ձեր սողոց անրմն ի՞նչ ա,
(Արամ, Հայկ)

Տուն ավլսզը փունջ մանուշակ
Հաց թխողը խանրմ խաթուն
Կտեր ֆողը խնզան փոշի
Գեյր տանի ձեր թշնամուն
Մեկ պոշատ հավ, մեկ կրգտըլ եզ աու
Հալիլիվեն տանի⁵⁵:

Բնորոշն այն է, որ հազորդոզը հիշում էր, թե երդը կատարվելիս է կղել Բարեկենդանին: Սակայն, ինչպես տարզ երեում է գրանցված Ավետիսների հեա նույնիսկ մասնակի համեմատությունից, երզը ըուրոովին կորցրել է իր նախկին կատարյալ տեսքը, իսկ այդ հանդամսնքն

իր հերթին անդրադարձել է նաև ռովանդակության վրա:

Նույն վիճակում են նաև հեակյալ երկու երգը:

Բարի ըիդուն ձեզ, հալիլիվա
էս տուն, էն տուն, հալիլիվա,
Կտեր ֆողը խնզան փոշի,
Տակի շարջը ծալած ոսկի,
Տուն ավլոզնին ցուխտ աղունակ,
Ձեռի ավելը փունջ մանուշակ,
Հաց թխողնին խանրմ խաթուն,
Թորոնները՝ խորաննի են:
Մննդվեց, ազատվեց.
Դեռ չէր հասել յիրեք օրական,
Տարավ երես տեր Ուհանին,
Անրմն էդեր տեր Ուհանես,
Աջու ձեռին սազմոսարան,
Ձախու ձեռին ավետարան,
Աջով գրեց, ձախով ջնջեց,
Ձախով գրեց, աջով ջնջեց
Սոնեն զնա իր հոր կեռ-կեռ ֆոզերը
Ձեռը ցերը տանի, շալ արասին շարը
տանի,

Մեր փային դուս բերեք ձուն ձերին⁵⁶:

Ջրոխնեքը՝ ճրադ լիսով
Թե քնած եք, վեր գարթնեցեք,
Թե գարթուն եք, վեր նստեցեք,
Մայրամն եկավ յալով-յալով,
Լալով-լալով, մղկտալով,
Ապրի ձեր որդին,
Մի քթալ օղ ավեք, ալելուան տանի⁵⁷:

«Ավետիս-Ալելուիաների» մեջ արտահայտված են ժողովրդական այլեայլ ըմբռնումներ ևս, թե՛ կրոնա-հմայական ե թե՛ կենցաղային-տնտեսական ռովանդակությամբ, որոնց քննարկմանն այստեղ շենք անդրադառնում: Չեն քննարկվել նաև «Ավետիս-Ալելուիաների» մեջ քրիստոնեակտն զադսփարախոսության դրսևորումները, որոնց ընդելուզումը ընիկ հայկական նախաքրիստոնեական հավատալիքների հետ առաջացրել է մի շատ հեաաքրքիր խառնուրդ, որը հատուկ ուսումնասիրության առարկա է:

⁵⁵ Ա. Ա. Օղաբաշյան, 1963 թ. Նոյեմբերյանի գիտարշավ, ԱԲԱ, տետր № 1, էջ 32:

⁵⁷ Ա. Ա. Օղաբաշյան, 1967 թ. Սպիտակի գիտարշավ, ԱԲԱ, տետր № 3, էջ 69:

⁵⁵ Ա. Ա. Օղաբաշյան, 1962, Ստեփանավանի գիտարշավ, ԱԲԱ, տետր № 1, էջ 17: